ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» փետրվարի 2023 թվական N 08

ք.Ստեփանակերտ

«ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԱՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 7-ի N 01 եզրակացությունը և «ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԱՏԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2023 թվականի փետրվարի 2-ին ներկայացրած դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2020 թվականի փետրվարի 6-ին «ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԱՏԻ» անհատ ձեռնարկատիրոջը տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի N 000025 լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա):

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Հրանտ Սաֆարյան

Պաշտոնական հրապարակման օրը՝ 8 փետրվարի 2023 թվական